ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"15" հունիսի 2012թ № 78 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՅԻՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի բ) ենթակետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 12-ի «ՀՀ քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու կարգը սահմանելու մասին» N 624 որոշմամբ սահմանված կարգի 3-րդ կետի դրույթների, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի քաղաքային և գյուղական համայնքներում քաղաքաշինական գործունեության պլանային ստուգումներ անցկացնելու նպատակով հանձնաժողովի կազմը, ստուգման ժամանակացույցը և առաջադրանքը հաստատելու մասին» N133 «Ա» որոշման և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան քաղաքային համայնքում քաղաքաշինական գործունեության ոլորտում կատարված պլանային ստուգման արդյունքներով կազմված արձանագրության,

ո ր ո շ ու մ եմ՝

1. Քաղաքաշինական գործունեության բնագավառում վերոհիշյալ համայնքում առկա խնդիրներին սահմանված կարգով լուծում տալու նպատակով համայնքի ղեկավարին առաջարկել.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել համայնքի վարչական տարածքներում հողահատկացման, ճարտարապետահատակագծային առաջադրանքների և շինարարության թույլտվությունների տրամադրման, դրանց նախագծերի հաստատման, համաձայնեցման, ինչպես նաև ինքնակամ շինարարությունների կասեցման և դրանց հետևանքների վերացման ուղղությամբ տարվող գործընթացները՝ ապահովելով քաղաքաշինական

գործունեության բնագավառում իրավական ակտերի, քաղաքաշինական փաստաթղթերի և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարումը.

2) համայնքի ավագանու նիստում քննարկել քաղաքաշինական գործունեության պլանային ստուգման արդյունքները և ձեռնարկված միջոցների մասին տեղյակ պահել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարան:

2. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. հունիսի 15
ք. Կապան

Արձանագրություն N 99

ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքային համայնքում քաղաքաշինական գործունեության ոլորտում կատարված պլանային ստուգման արդյունքների մասին

14. 06. 2012 թ. ք. Կապան

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության 1998թ. մայիսի 5-ի ՀՕ-217 օրենքի 26-րդ հոդվածով, ՀՀ նախագահի 06.05.1997թ. «ՀՀ մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ – 728 հրամանագրի 1.13 կետի դ/ ենթակետով, ՀՀ կառավարության 12.10.1998թ. «ՀՀ քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու կարգը սահմանելու մասին» թիվ 624 որոշմամբ սահմանված կարգի 3-րդ կետի դրույթներով, ի կատարումն ՀՀ Սյունիքի մարզպետի 07.09.2011թ. «ՀՀ Սյունիքի մարզի քաղաքային և գյուղական համայնքներում քաղաքաշինական գործունեության պլանային ստուգումներ անցկացնելու նպատակով հանձնաժողովի կազմը, ստուգման ժամանակացույցը և առաջադրանքը հաստատելու մասին» թիվ 133 «Ա» որոշման պահանջների, մարզպետարանի հանձնաժողովը 2012 թ. հունիսի 5-6-ը հատկյալ կազմով՝

Ռ.Ավետիսյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ, հանձնաժողովի նախագահ

Ա.Մարտիրոսյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ

Ժ.Բաբայան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ

Մասնակցությամբ՝ Կապան քաղաքային համայնքի ղեկավարի կողմից լիազորված անձ՝ քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետ Ա. Ստեփանյանի:

Պլանային ստուգումն իրականացվել է Կապան քաղաքային համայնքում:

Պլանային ստուգումը ընդգրկում է 2011թ. հունիսի 15-ից մինչև 2012թ. հունիսի 6-ը ընկած հատվածը:

Ստուգման ընթացքում /ըստ առաջադրանքի/ ուսումնասիրվել են՝

1.Կառուցապատման նպատակով հողահատկացումների համապատասխանությունը քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, իսկ դրանց փոփոխության կամ բացակայության դեպքում՝ ՀՀ կառավարության 02.05.2003թ. թիվ 609 և 30.07.1998թ. թիվ 479, ինչպես նաև ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 և 29.12.2005թ. թիվ 2404 որոշումների պահանջներին:

2.Ճարտարապետահատակագծային առաջադրանքների /ՃՀԱ/ առկայությունը և դրանց համապատասխանությունը ՀՀ կառավարության 29.08.2002թ. թիվ 1473-Ն որոշման պահանջներին:

3.Շենքերի և շինությունների նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության 21.12.1998թ. թիվ 812 որոշման /նրանում կատարված լրացումների/ կատարման ընթացքը:

4.Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկումը ՀՀ կառավարության 28.10.1998թ. թիվ 660 որոշման պահանջների համաձայն:

5.Շինարարության /քանդման/ թույլտվությունների առկայությունը և համապատասխանությունը ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 91 որոշման պահանջներին:

6.Ավարտական ակտերի ձևակերպումների համապատասխանությունը ՀՀ կառավարության 08.05.2003թ. թիվ 626-Ն որոշման պահանջներին:

7.Ինքնակամ շինարարության կանխարգելմանը, կասեցմանը, քաղաքաշինական գործունեությանն առընչվող այլ գործընթացներ:

Ստուգման արդյունքում պարզվել է՝

1.Կառուցապատման նպատակով հողահատկացումների համապատասխանությունը քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, իսկ դրանց փոփոխության կամ բացակայության

դեպքում՝ ՀՀ կառավարության 02.05.2003թ. թիվ 609 և 30.07.1998թ. թիվ 479, ինչպես նաև ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 և 29.12.2005թ. թիվ 2404 որոշումների պահանջներին:

Ստուգվող ժամանակահատվածում, ըստ քաղաքապետարանի կողմից տրամադրված նյութերի, Կապանի քաղաքապետի կողմից կայացվել է 91 հատ հողահատկացման որոշում, որից 15-ը՝ աճուրդով, 12-ը՝ մրցույթով-կառուցապատման իրավունքով, 64-ը՝ մինչև 20ք.մ. մակերեսով, ընդ որում 39 հողահատկացման որոշումները կայացվել են 2011 թվականին, 25-ը՝ 2012թ.-ին:

Բոլոր հողահատկացման որոշումները համապատասխանում են համայնքի գլխավոր հատակագծի պահանջներին:

- 220.0ք.մ. աճուրդով, Ռ. Մինասյան, /որոշում՝ 698, 19.09.2011թ./, առևտրի կենտրոն, ԶՊՄԿ
- 2.0հա. աճուրդով, Վաչագան թաղամաս /որոշում՝ 1051, 26.12.2011թ./, Կարեն Օհանջանյան
- 99.0ք.մ. աճուրդով, Մ. Պապյան 16ա/5, /որոշում՝ 1050, 26.12.2011թ./, արհեստանոց, Ալբերտ Հարությունյան
- 70.0ք.մ. աճուրդով, Ռ. Մինասյան 17/3, /որոշում՝ 1047, 26.12.2011թ./, արհեստանոց, Ջեյմս Վարդանյան
- 374.0ք.մ., աճուրդով, Ռ. Մինասյան 17/2, /որոշում՝ 1046, 26.12.2011թ./, բնակելի տուն, Թաթուլ Պողոսյան
- 1343.0ք.մ., աճուրդով, Ա. Մանուկյան 1-ին նրբ, 8/9, /որոշում՝ 09-Ա, 17.01.2012թ./, զվարճանքի համալիր, Տիգրան Աթայան
- 403.0ք.մ., աճուրդով, Լեռնագործների 5/16, /որոշում՝ 170, 14.02.2012թ./, անհատական բնակելի տուն, Մանվել Մանուկյան
- 50.0ք.մ., աճուրդով, Հալիձորի 16/1, /որոշում՝ 337-Ա, 13.03.2012թ./, ավտոտնակներ, Ժան Մովսիսյան
- 351.0ք.մ., աճուրդով, Լեռնագործների 20, /որոշում՝ 336-Ա, 13.03.2012թ./, բնակելի տուն, Արմեն Սարգսյան
- 517.0ք.մ., աճուրդով, Գ. Արզումանյան 133, /որոշում՝ 335, 13.03.2012թ./, խանութ-սրահ, Մարգարիտա Սաֆարյան
- 40.0ք.մ., աճուրդով, Ձորքի 10/2, /որոշում՝ 334-Ա, 13.03.2012թ./, օժանդակ շինություն, Միհր Անդրեասյան
- 32.0ք.մ., աճուրդով, Լեռնագործների 5/1/1, /որոշում՝ 333-Ա, 13.03.2012թ./, օժանդակ շինություն, Արշակ Հարությունյան
- 570.0ք.մ., աճուրդով, Սպանդարյան 40, /որոշում՝ 416-Ա,30.03.2012թ./, բարեկարգում, ցանկապատի կառուցում, Գարիկ Վեզիրյան
- 0.0246հա., աճուրդով, Արփիկ, /որոշում՝ 540-Ա, 03.05.2012թ./, ավտոկայանատեղի կառուցում, Վոլոդիա Ավանեսյան
- 0.002հա., աճուրդով, Սպանդարյան 3/10, /որոշում՝ 539-Ա, 03.05.2012թ./, օժանդակ շինություն,
- 0.18հա., մրցույթով, Լենինանքեր , /որոշում՝ 713, 19.09.2011թ./, այգեգործությամբ զբաղվելու նպատակով, Հենրիկ Մելիք-Քարամյան
- 0.12հա., մրցույթով, Լենինանքեր , /որոշում՝ 712, 19.09.2011թ./, այգեգործությամբ զբաղվելու նպատակով, Հենրիկ Մելիք-Քարամյան
- 5.7հա., մրցույթով, Լենինանքեր , /որոշում՝ 711, 19.09.2011թ./, այգեգործությամբ զբաղվելու նպատակով, Հենրիկ Մելիք-Քարամյան
- 2.1հա., մրցույթով, Լենինանքեր , /որոշում՝ 710, 19.09.2011թ./, այգեգործությամբ զբաղվելու նպատակով, Հենրիկ Մելիք-Քարամյան
- 0.20221հա., մրցույթով, Գործարանային , /որոշում՝ 11Ա, 17.01.2012թ./, գյուղատնտեսական բույսերի մշակման նպատակով, Վահան Սաֆարյան
- 0.0019հա., մրցույթով, Բեխ , /որոշում՝ 341Ա, 13.03.2012թ./, այգեգործությամբ զբաղվելու նպատակով, Գագիկ Ավետիսյան
- 0.0676հա., մրցույթով, Շինարարների փողոց տանող ճանապարհ, /որոշում՝ 340Ա, 13.03.2012թ./, այգեգործությամբ զբաղվելու նպատակով, Սարգիս Դավթյան
- 1192ք.մ., մրցույթով, Երկաթուղայիններ , /որոշում՝ 339Ա, 13.03.2012թ./, մշակաբույսերի մշակման նպատակով, Սվետլանա Թումանյան
- 252ք.մ., մրցույթով, Դավիթբեկի հրապարակի հարևանությամբ, /որոշում՝ 338Ա, 13.03.2012թ./, սրճարանի կառուցում, Արարատ Կարապետյան
- 0.0135հա., մրցույթով, Հալիձորի թիվ 2 շենքի հարևանությամբ, /որոշում՝ 543Ա, 03.05.2012թ./, այգեգործությամբ զբաղվելու նպատակով, Սամվել Բաղդասարյան
- 0.011հա., մրցույթով, Հալիձորի թիվ 15 շենքի հարևանությամբ, /որոշում՝ 542Ա, 03.05.2012թ./, օժանդակ շինություն, Արկադյա Դավթյան

- 52.0ք.մ., մրցույթով, Շինարարների 7/3, /որոշում՝ 591Ա, 03.05.2012թ./, օժանդակ շինություն, Լուսինե Հարությունյան

2. Ճարտարապետահատակագծային առաջադրանքների (ՃՀԱ) առկայությունը և դրանց համապատասխանությունը ՀՀ կառավարության 29.08.2002թ. թիվ 1473-Ն որոշման պահանջներին:

Ստուգվող ժամանակահատվածում կառուցապատման նպատակով, սահմանված կարգով, ներկայացված հայտերի հիման վրա 159 օբյեկտների համար տրվել է ճարտարապետահատակագծային առաջադրանք, որոնցից 80-ը տրվել են 2011 թվականին, 79-ը՝ 2012 թվականին: Բոլոր ՃՀԱ-ները տրվել են ՀՀ կառավարության 29.08.2002թ. թիվ 1473-Ն որոշման պահանջներին համապատասխան:

3.Շենքերի և շինությունների նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության 21.12.1998թ. թիվ 812 որոշման /նրանում կատարված լրացումների/ կատարման ընթացքը:

Տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների հիման վրա մշակվել և հաձայնեցվել են 86 օբյեկտների նախագծերը: Բոլոր նախագծերում առկա են նախագծերի հեղինակների գրավոր երաշխավորագրերը, կամ փորձաքննության եզրակացությունները: Բոլոր նախագծերը համաձայնեցվել են համայնքի ղեկավարի կողմից:

4.Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկումը ՀՀ կառավարության 28.10.1998թ. թիվ 660 որոշման պահանջների համաձայն:

Իրազեկումը կատարվել է ավագանու նիստերի ժամանակ, ինչպես նաև <<Հայաստանի Հանրապետություն>> թերթում՝ հայտարարությունների ձևով:

5.Շինարարության /քանդման/ թույլտվությունների առկայությունը և համապատասխանությունը ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 91 որոշման պահանջներին:

Ստուգվող ժամանակահատվածում, քաղաքապետարանի կողմից, սահմանված կարգով, տրվել է 86 հատ շինարարության թույլատվություն, ընդ որում 55-ը տրվել են 2011թ.-ին, 31-ը՝ 2012թ.-ին:

Շինարարության թույլտվությունները տրվել են հիմնականում ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 91 որոշման պահանջներին համապատասխան:

Երկու շինթույլտվություն տրվել է Վ. Սարգսյանի անվան զբոսայգում, խախտելով կանաչ գոտին:

- Տարածքի բարեկարգում կանաչ գոտում /Վ. Սարգսյանի զբոսայգում/, Վաչե Ջհանգիրյան
- Կառուսելների տեղադրում կանաչ գոտում /Վ. Սարգսյանի զբոսայգում/, Պետրոս Հայրապետյան

Ստուգվող ժամանակահատվածում, քաղաքապետարանի կողմից տրվել է 1հատ քանդման թույլտվություն:

6.Ավարտական ակտերի ձևակերպումների համապատասխանությունը ՀՀ կառավարության 08.05.2003թ. թիվ 626-Ն որոշման պահանջներին:

Ստուգվող ժամանակահատվածում, քաղաքապետարանի կողմից տրվել են շինարարության շահագործման փաստագրման 47 ակտ, որից՝ 2011թ.-ին՝ 28հատ, 2012թ-ին՝ 19հատ:

Քաղաքապետարանի կողմից տրված շինարարության շահագործման փաստագրման 47 ակտերի մասին, սահմանված կարգի համաձայն ծանուցվել է ՀՀ Սյունիքի մարզպետին:

7.Ինքնակամ շինարարության կանխարգելմանը, կասեցմանը, քաղաքաշինական գործունեությանն առընչվող այլ գործընթացներ:

Ստուգվող ժամանակահատվածում համայնքի վարչական տարածքում հայտնաբերվել են 15 ինքնակամ շինություն.

- Սրճարանի կառուցում կանաչ գոտում /Ռ. Մելիքյան թիվ 6 շենքի հարևանությամբ, Վ. Սարգսյանի զբոսայգում/, Էդգար Բաղդասարյան
- Արտադրական շինություն Ձորք թաղամասում, միջպետական ճանապարհի հարևանությամբ, Արմեն Մարության
- Առևտրի տաղավարի կառուցում Հ. Ավետիսյան 1ա հասցեի հարևանությամբ, Գարիկ Սահակյան
- Առևտրի տաղավարի կառուցում Հ. Ավետիսյան 1ա հասցեի հարևանությամբ, Քրիստինե Համբարձումյան
- Առևտրի տաղավարի կառուցում Հ. Ավետիսյան 1ա հասցեի հարևանությամբ, Քնարիկ Հարությունյան
- Առևտրի տաղավարի կառուցում Հ. Ավետիսյան 1ա հասցեի հարևանությամբ, Գարիկ Հովակիմյան
- Առևտրի տաղավարի կառուցում Հ. Ավետիսյան 1ա հասցեի հարևանությամբ, Սամվել Հարությունյան
- Առևտրի տաղավարի կառուցում Հ. Ավետիսյան 1ա հասցեի հարևանությամբ, Աբել Առաքելյան
- Առևտրի տաղավարի կառուցում Հ. Ավետիսյան 1ա հասցեի հարևանությամբ, Սպարտակ Հարությունյան
- Սրճարանի կառուցում Շահումյան փողոց <<Պրինց>> սրճարանի հարևանությամբ, Էդգար Հակոբյան
- Պատրաստման բազայում /նրան սասաց.բազմաբնակարանային շենք/, Շահումյան 35

- Պատուհանի բացում /կրող պատ,բազմաբնակարան շենք/, Հ. Ավետիսյան 2
- Կապան քաղաքում մասսայական բնույթ են կրում բազմաբնակարան շենքերի կցակառույցների կառուցումը, որը խախտում է շենքերի ճակատային տեսքը, ինչպես նաև սեյսմակայունությունը: /Հ. Ավետիսյան 2, Մ.Հարությունյան 3, Շահումյան 35, Շահումյան 39ա, Հ. Ավետիսյան 26/

Մարզպետարանի հանձնաժողովի կողմից ներկայացված նյութերում տեղ գտած թերությունների և բացթողումների վերաբերյալ տրվել է պարզաբանումներ և անհրաժեշտ տեղեկատվական օգնություն:

Ռ. Ավետիսյան ..... համայնքի ղեկավար

Ա.Մարտիրոսյան

Ժ.Բաբայան ..... քաղաքաշինության բաժնի պետ